ԴԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՍՆՆԵՔԵՐԻՄ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՐԽԻՎԸ

Սեներերիմ Տեր-Հակոբյանը (1863—1937) ծնվել է Դյումուշխանա գյուղաքաղաքում (Թուրքիա)։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում, այնուհետև ավարտել է Էջմիածնի Ճեմարանը և Բեռլինի համալսարանը։ Ս. Տեր-Հակոբյանն աշխատել է Թավրիզի, Երևանի, Բաքվի, Ն. Նախիջևանի, Թիֆլիսի, Շուշիի և Այնքսանդրապոլի հայկական դպրոցներում՝ որպես ուսուցիչ, ապա՝ Գեորգյան ճեմարանում, որպես Հայոց պատմության դասախոս։ Մանկավարժական աշխատանքին զուգընթաց նա տարիներ շարունակ զբաղվել է բանասիրությամբ և ազգագրությամբ։ 1903 թ. «Արարատում» տպագրվում է նրա «Վարդանայ վարդապետի Բագիշեցւոյ ցուցակ դրոց Ամրդոլու վանուց» խորագրով ուսումնասիրությունը։

1920 թ. դեկտեմբերի 20-ին Ս. Տեր-Հակոբյանը նշանակվում է Էջմիածնի Մատենադարանի վարիչ։ 1921 թ. փետրվարի 1-ից նա ընտրվում է Էջմիածնի Կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական խորհրդի անդամ։ Էջմիածնի Մատենադարանում նրա պաշտոնավարության տարիներին (1921—1922 թթ.) տպագրվում է «Բաներեր Հայաստանի գիտական ինստիտուտի» խորագրով Ա և Բ հատորների միացյալ գիրքը, որտեղ ամփոփվում են Ս. Տեր-Հակոբյանի «Սրիզայի հունարեն արձանագրություններից», «Ներսայր Բյուռանդացի» և «Լևոն Լիսիցյան» խորագրով արժեքավոր հոդվածները։ 1921 թ. Ս. Տեր-Հակոբյանը Էջմիածնի Կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական նստաշրջանում զեկուցում է կարդում՝ «Ղզլթամուրի Ուրարտական բերդի մնացորդները» թեմայով։

Ս. Տեր-Հակոբյանը հայտնի էր որպես հմուտ դրարարագետ, բրդագետ և թուրքագետ։ Նրա արխիվում կան 310 միավոր վավերագրեր, այդ թվում 1916 թ. Գեորգյան ճեմարանում հայոց պատմության և աշխարհագրության վերաբերյալ հեղինակի կարդացած դասախոսությունների սղագրությունները, «Հայոց եկեղեցին ԺԶ դարում», «Տարեգրություն Տեր Բարսեղի», «Ավետիք պատրիարք», «Պոլսի պատրիարքությունը», «Ժամանակագրություն պատմության Ս. Երուսաղեմի», «Կյումիշխանի և Տրապիզոնի հայոց վանքերի հնությունների և ժողովրդի սովորությունների նկարագրությունները», «Բժշկական պատմության մասին» ուսումնասիրությունների ձեռագրերը, Ուրարտուի և ուրարտական սեպագիր արձանագրությունների մասին հավաքած նյութերը, ուսումնասիրողի դիտողություններով հանդերձ», հայերեն և այլ լեզուներով փոքրիկ բառարաններ, անավարտ հոդվածների սևագրություններ և այլ նյութեր։

Ս. Տեր-Հակոբյանը նամակագրական կապ է ունեցել Կ. Կոսաանյանի, Հ. Մանանդյանի, Թ. Թորամասյանի, Ե. Լալայանի, Ա. Հովհաննիսյանի, Տիրայր վարդապետի, Ն. Ակինյանի, Ա. Քալանթարի, զորավար Անդրանիկի, Վ. Միրաքյանի, Մելիքսեթ-Բեկի և այլոց հետ, որոնց նամակները նույնպես պահվում են նրա արխիվում։

Ս. Տեր-Հակոբյանի արխիվում են պահվում ակադեմիկոս Ա. Թամանյանի կողմից Ս. Տեր-Հակոբյանին հասցեագրված պաշտոնական գրություններ, ինչպես նաև հայատառ քրդերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, պարսկերեն հեքիաթներ, քառյակներ, ժողովրդական երգեր, պարերգեր և այլն։ Ուշագրավ են Մհերի, Սասունցի Դավթի, Քյոռ-օղլու, Ջանփոլադի և այլոց մասին եղած նոր նյութերը, հայագետ Մեսրոպ Մաքսուդյանի 1916 թ. Էջմիածնի ճեմարանում կարդացած «Գեղարվեստը հայ վանքերում» խորագրով դասախոսությունները։

Մանկավարժ, բանահավաք և գրող Սարգիս Քամալյանի (1869—1934) Էջմիածնի կուլտուրայի պատմության ինստիտուտին 1933 թ. մայիսի 21-ին հասցեագրած գրությունից պարզվում է, որ նա գյուղից գյուղ շրջել, հավաքել ու պատրաստել է «Շուլավեր—Շահումյան ազգագրական նյութեր» խորագրով ծավալուն աշխատությունը և ուղարկել Էջմիածնի հիշյալ ինստիտուտին՝ հրատարակելու։ Սակայն այն չի հրատարակվել և աշխատության ձեռագիրը պահվում է Ս. Տեր-Հակոբյանի արխիվում։ Ս. Քամալյանը իր աշխատության մեջ, օգտագործել է երեք կարևոր վավերագրեր. առաջինը Ներսես Աշտարակեցու 1826 թ. օգոստոսի 7-ին Թիֆլիսից, Շուլավերցի Մելիք Օհանջանին գրած նամակն է, երկրորդը 1791 թ. գրած մի վավերագիր է, ուր ասվում է, թե ինչ հարաբերությունների մեջ է եղել Շուլավերի հայ ժողովուր-

դը վրաց թագավորաշն՝ Իլիոնի և Ալեքսանդրի հետ։, իսկ Երոոդ վավերագրի մասին Ս. Քամալյանը գրում է. «Մեծագիր. Մեսրոպյան երկաթե գրերով մագաղաթե ավետարանի թերթ է. երեսի լայնությունը 26 սանտ.. երկարությունը՝ 36 սանտ. իբրև վերջին թերթ, հիշատակարան է, գրված Թամար թագուհու որդի Լաշի թագավորության օրով, Միափորի (Ներկա Շամշադին) Զարմազանից վանքում։ Ստացել եմ Արգարյանը ընկեր Ս-ից, ծննդով Նախիջևանցի է, չի իմանում, թե ինչպե՞ս է ընկել այս խոշոր մագաղաթե հին ավետարանը հայրական տուն, ուր ամեն մի այցելող մի թերթ սոկել է. իբրև հիշատակ հետը տարել։ Բարեբախտաբար ինձ բաժին ընկավ հիշատակարանի ամենահետաքրքիր մասը, որը տպագրում եմ այստեղ»[2]։

Ս. Քամալյանի նշված հարցերից բացի, ձեռագրի հիշատակարանում գրիչը գրում է, որ հիշյալ ձեռագիրը ընդօրինակել և ավարտել է Աղվանից Հովհաննես կաթողիկոսի և վրաց աշխարհի զորավարներ՝ Զաքարիայի և Իվանեի պաշտոնավարությունների ժամանակ (XIII դ.)։ Հիշատակարանում արծարծված են հարցեր, որոնք կարևոր են հայ և վրաց ժողովուրդների բարեկամության, ինչպես նաև տնտեսական որոշ հարցեր գնահատելու առումով։

Աշուղական գրականության գնահատման առումով կարևոր է նկարագրվող արխիվում պահվող երկարամյա մանկավարժ Ս. Քամալյանի «Աշուղների կյանքից և խաղերից» աշխատությունը՝ գրված 1934 թ. Թիֆլիսում։

Սարգիս Քամալյանը մանկավարժական աշխատանքին զուգընթաց ուսումնասիրում է Ուտի ժողովրդի պատմությունն ու կենցաղը. ազգագրական հարուստ նյութեր հավաքում այդ ժողովրդի մասին և գրում «Ուտիական նիժ գյուղի ագաթների. տոների և կենցաղի մասին» ուշագրավ ուսումնասիրությունը։

Արժեքավոր են նաև Ս. Տեր-Հակոբյանի արխիվում պահված լուսանկարները և գեղարվեստական հետևյալ նկարները. 1879 թ. մի խմբանկար. որտեղ պատկերված է զրոզ Ռաֆայել Պատկանյանը. Պետրոս Ադամյանի լուսանկարը. որ 1885 թ. նվիրել է Վարգգես Սուրենյանին, Կոմիտասի նկարը. որ 1893 թ. նվիրել է Համազասպ վարդապետին. ազգագրագետ Երվանդ Լալայանի նկարը. որ 1911 թ. նվիրել է Ս. Տեր-Հակոբյանին, Լալայանի կնոջ՝ Հայկանուշի լուսանկարը. Ս. Տեր-Հակոբյանի և իր կնոջ նկարները. Դագիկ թագավորի, մայր Հայաստանի նկարները։

Արխիվում պահվում են «Փունջ», «Բյուզանդիոն», «Հայրենիք» թերթերի 1900—1909 թթ. որոշ համարներ։

Հարկ է նշել, որ Ս. Տեր-Հակոբյանի արխիվային վավերագրերը. հարուստ նյութերը կարևոր փաստեր են պարունակում հայագիտության, ազգագրության և այլ հարցերի վերաբերյալ, որոնց վրա ենք հրավիրում համապատասխան մասնագետների ուշադրությունը։

Ա. Հ. ԱԴԱՄՅԱՆ

---

1 ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Ս. Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. № 72, վավ. № 1դ. էջ 812—816։

2 Նույն տեղում։